

— Յանձնուած են մամուլին և շուտով լոյս կտեսնեն Նոր-Նախիջևանում՝ Ռ. Պատկանեանի երկերի III-րդ հատորը, և Միք. Նալբանդեանցի երկերը երկու հատորով։ Երկուսի խմբագրութիւնն էլ սկզբից յանձն էր առել և կատարում էր Եր. Շահապիզը, իսկ նրա հրաժարուելուց յետոյ—առանձին յանձնաժողով Նոր-Նախիջևանի գրական անձինքներէց։ Հրատարակութիւնը մասնաւոր մարդու ծախքով է կատարուում։

— Նորայէս Նոր-Նախիջևանում լոյս է տեսնելու Ա. Իսահակեանի բանաստեղծութիւնների նոր ժողովածուն։

— Մուշէ վարդապետ Դանազեօղեանը տեղափոխուել է Մոսկուա։

ՆԱՄԱԿ ԽՄԲԸԳՐԻՆ

Ծնուել ես Ապարան
 Մնուել ես Բաշապարան
 Բեզ ոնց հասկացնեմ
 Ի՞նչ է վան, ի՞նչ երևան
 Ժողովր՝ առած։

Այս երեկոյ ես կարդացի կամակերի ուղիղն ասած թերթեցի «Աղբիւրի» առաջին համարը, որ ահա ես քսան և երկու տարի աչքի տակով միշտ անցեմկացնում, որպէս և մեր միւս թերթերը։ Մենք արդէն շատ անգամ աւելի ենք ունեցել դիտելու, որ հայը իւր լեզուով կարդալ չէ սիրում և բաղտի մի զարմանալի խաղ, որ հային մեղադրում են հէնց այս բանում, որ նա շատ է սիրում իւր մայրենի լեզուն։ Ի՛նչ ոչ ոք էլ ճշմարտութիւնը պարզել չի կամենում։ Մեր այժմեան միակ օրագիրը, որ սպառնում է «պատժելու» մնացեալ թերթերին, կարիք չունի այժմ ի հարկէ խօսելու հայի վերոյիշեալ պակասութեան մասին, որովհետեւ նա միլիօնաւոր ժողովրդի մէջ ամեն տեսակ յանցանքների միջոցաւ շատ ընթերցողներ ունի։ Բայց իրողութիւնը նա է, որ հայը լուրջ բան չի կարդում, իսկ մանկական միակ ամսագիրը համարեա մոռացութեան է տրուած։ Քսան երկու տարի միակ մանկական ամսագիր է հրատարակւում, ուր միշտ գրել են մեր լաւագոյն գրագէտները և շարունակում են գրելու, բայց նա դարձեալ քսան և երկու հարիւր բաժանորդ չունի, իսկ Բաքուայ հայ ինտէլիգենցիան «Զարթ» թերթում տպագրում է իւր ազգասիրական ցուցակ ծառայութեանը։ Մի երկու անգամ թատրոն եմ գնացել, ուսանող ժամանակս սուտ ազատամիտ եմ եղել, այժմս էլ ամեն տեղ քիթըս խոթում եմ իբրեւ գործիչ և ազգասէր—ահա նոցանից մէկի ծառայութեան ցուցակը։ Իսկ կարդալ և գիտենալ մայրենի գրականութիւնը, իրօք նպաստել ընթերցանութեան տարածմա-

Նը—այս բոլորը երևացող բաներ չեն: Գլխացէք, հայեր, մեր մանուկներին և կրթէք նրանց գէթ մի լեզուով հիմնաւոր կերպով, ապա թէ ոչ հարիւր լեզուներով խօսող երեխան և ոչ մի լեզուով չէ կարող խօսել և տուէք մեր միակ մանկական թերթին այնքան բաժանորդ, որքան վայել է մեր ժողովրդի թուին:

ՆՈՒՇԵՐՈՎԱՆ

37

ԱՂՑՄԻՔ

Մեր յարգոյ աշխատակից Պ. Ն. Շահադիզը ուղարկեց մեզ Նալբանդեանի «Աղցմիքի» տպարանում կորցրած կտորը, որ գետեղում ենք այստեղ.

Է

ՈՉ ՀԱՆԻՑ ԱՐՏԱՔՍ

Պի բուրաստան ծաղկոցիս իջեալ,
 Ինձ հանդէպ գայ տիկին զուարթերես,
 Բայց թխաթոյր զանձամբ ինչ արկեալ
 Լօղիկ ազնիւ, տխուր յոյժ 'ի տես:
 «Ողջոյն քեզ, քոյր, տիրաւանդ ողջոյն»...
 Այլ նա առ այս.—Նւ ճ իցես դու:
 «Յոյր 'ի դրախտին երգի վարդենւոյն՝
 Սոխակին ցանդ մեղեդի աղու»...
 Նա դարձեալ, թէ—Ո՛չ գիտեմ զքեզ,
 «Ո՛չ գտիւոյ քաջ գերգէջ վսեմ».
 —Զիմանամ իսկ, այր դու, զոր ասես,
 «Նւ ճ ժամիս—այո՛, տեսանեմ»...
 Յական քթթել նմա վակժոյժ լեալ՝
 Բուռն հարկանեմ զխրոխտ բրգանց...
 Նւ ի համբոյր վառ վարդիցն եկեալ.
 Այլ նա խուսել ճգնի յիմ ձեռաց,
 Նւ ընդվզեալ ամբռնայ զձայն,
 Նւ ի դարպաս ձգտեալ պարտիզիս՝
 Բայց տուժեցան... զի իմ առժամայն
 Յից ընդ ներքին վարեալ ծամելիս...

Զարթուցեալ ի քնոյ

Հրեշտակն զգայ զպատրանս

Ի տակաւ հոսելոյ

Որոյ ընաւից տայ զկեանս: